Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ᲓᲔᲑᲣᲚᲔᲑᲐ ᲡᲐᲡᲝᲤᲚᲝ ᲡᲐᲑᲭᲝᲗᲐᲡ ᲛᲘᲗᲐᲠ ᲡᲐᲪᲐᲚᲓᲔᲑᲣᲚᲝ ᲓᲐᲓᲒᲔᲜᲘᲚᲔᲑᲐᲗᲐ ᲒᲐᲛᲝᲪᲔᲛᲘᲡᲐ ᲓᲐ ᲓᲐᲓᲒᲔᲜᲘᲚᲔᲑᲐᲗᲐ ᲓᲐᲠᲦᲕᲔᲕᲘᲡᲐᲗᲕᲘᲡ ᲞᲐᲡᲣᲮᲘᲡᲛᲒᲔᲑᲚᲝᲑᲘᲡ ᲨᲔᲡᲐᲮᲔᲑ.

ᲡᲐᲥ. ᲡᲡᲠ ᲡᲐᲮᲐᲚᲮᲝ ᲙᲝᲛᲘᲡᲐᲠᲗᲐ ᲡᲐᲑᲭᲝᲡ ᲓᲐ ᲔᲙᲝᲜᲝᲛᲘᲣᲠᲘ ᲡᲐᲑᲭᲝᲡ ᲡᲐᲥᲛᲔᲗᲐ ᲛᲛᲐᲠᲗᲕᲔᲚᲝᲑᲘᲡ ᲒᲐᲛᲝᲪᲔᲛᲐ

17 MAY 2013
18 MAR 2010
352
Ч-21
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ЯЗЫКОЗНАНИЯ Академии Наук СССР
352
Ч-21

ᲙᲐᲜᲝᲜᲐᲓᲠᲝᲣᲚᲝᲑᲐ

ᲒᲚᲔᲮᲣᲠᲘ ᲡᲐᲑᲭᲝᲗᲐ ᲙᲝᲚᲛᲘᲗ ᲞᲐᲠᲢᲐᲓᲘᲠ ᲕᲝᲠᲝᲜᲨᲝᲣᲛᲜᲔᲑᲘ ᲖᲠᲐᲡᲢᲐᲠᲐᲙᲔᲚᲝᲣ ᲔᲚ ᲜᲠᲐᲜᲒᲘᲡ ᲮᲐᲮᲢᲛᲐᲜ ᲖᲐᲛᲐᲠ ᲞᲐᲡᲐᲡᲮᲐᲜᲐᲡᲕᲚᲝᲑᲘᲡ ᲔᲜᲘᲗᲐᲠᲙᲔᲚᲝᲣ ᲛᲐᲡᲘᲡ

[ᲓᲐᲛᲢᲙᲘᲪᲔᲑᲣᲚᲘ ᲐᲠᲘᲡ ᲡᲐᲥᲐᲠᲗᲕᲔᲚᲝᲡ ᲪᲔᲜᲢᲠᲝᲜᲘᲡ ᲒᲐᲜᲙᲐᲠᲒᲘᲡ ᲙᲝᲛᲘᲢᲔᲗᲘᲡ ᲓᲐ ᲡᲐᲥᲐᲠᲗᲕᲔᲚᲝᲡ ᲡᲡᲠ ᲪᲔᲜᲢᲠᲐᲚᲣᲠᲘ ᲐᲦᲡᲠᲣᲚᲘ ᲙᲝᲛᲘᲢᲔᲗᲘᲡ ᲛᲘᲡᲒᲐᲜ 1931 Წ. ᲡᲔᲥᲢᲔᲛᲑᲔᲠᲘᲡ 17-ᲘᲡ (ᲡᲡᲠᲙ Ო. Დ 1931 Წ. № 20, ᲜᲝᲛ. ᲜᲝᲛ. 206, 209) ᲛᲘᲜᲩᲔᲚ 1932 Წ. ᲓᲔᲙᲔᲛᲑᲔᲠᲘᲡ 31-ᲠᲘ ᲒᲐᲜᲐᲠᲒᲘᲚᲘ ᲪᲕᲚᲘᲚᲔᲑᲔᲑᲘᲗ]

I. ᲞᲐᲠᲢᲐᲓᲘᲠ ᲕᲝᲠᲝᲜᲨᲝᲣᲛᲜᲔᲑᲘᲡ ᲖᲠᲐᲡᲢᲐᲠᲐᲙᲝᲚᲝᲑᲘᲡ

*1. ᲒᲚᲔᲮᲣᲠᲘ ᲡᲐᲑᲭᲝᲗᲐ ᲙᲝᲚᲛᲘᲗᲔᲑᲘ ᲘᲦᲔᲑᲔᲜ ᲣᲤᲚᲔᲑᲐᲡ ᲛᲘᲦᲔᲑᲣᲚᲘ ᲐᲠᲘᲡ ᲞᲐᲠᲢᲐᲓᲘᲠ ᲕᲝᲠᲝᲜᲨᲝᲣᲛᲜᲔᲑᲘ, ᲠᲝᲛᲚᲘᲗᲐᲜᲐᲪᲘᲡᲐᲗᲕᲘᲡ ᲗᲐᲕᲘᲡᲘ ᲢᲔᲠᲘᲢᲝᲠᲘᲘᲡ ᲡᲐᲖᲦᲕᲠᲔᲑᲨᲘ ᲛᲝᲥᲛᲔᲓᲔᲑᲘᲡ ᲓᲐᲪᲕᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ, ᲐᲡᲔᲕᲔ ᲛᲔᲬᲐᲠᲛᲔᲝᲑᲘᲡ, ᲬᲐᲠᲛᲝᲔᲑᲘᲡ ᲓᲐ ᲠᲔᲖᲘᲓᲔᲜᲢᲣᲠᲘ ᲡᲐᲛᲬᲐᲠᲝᲔᲑᲘᲡ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲐᲡᲔᲕᲔ ᲐᲠᲘᲡ ᲕᲝᲠᲝᲜᲨᲝᲣᲛᲜᲔᲑᲘ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲓᲐᲪᲕᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲐᲡᲔᲕᲔ ᲛᲔᲬᲐᲠᲛᲔᲝᲑᲘᲡ, ᲬᲐᲠᲛᲝᲔᲑᲘᲡ ᲓᲐ ᲠᲔᲖᲘᲓᲔᲜᲢᲣᲠᲘ ᲡᲐᲛᲬᲐᲠᲝᲔᲑᲘᲡ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲕᲝᲠᲝᲜᲨᲝᲣᲛᲜᲔᲑᲘ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ, ᲠᲝᲛᲚᲘᲡᲐᲗᲕᲘᲡ ᲐᲠᲘᲡ ᲒᲐᲜᲡᲐᲖᲦᲕᲠᲣᲚᲘ ᲡᲐᲛᲬᲐᲠᲝᲔᲑᲘᲡ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲐᲡᲔᲕᲔ ᲛᲔᲬᲐᲠᲛᲔᲝᲑᲘᲡ, ᲬᲐᲠᲛᲝᲔᲑᲘᲡ ᲓᲐ ᲠᲔᲖᲘᲓᲔᲜᲢᲣᲠᲘ ᲡᲐᲛᲬᲐᲠᲝᲔᲑᲘᲡ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲓᲐᲪᲕᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲐᲡᲔᲕᲔ ᲐᲠᲘᲡ ᲕᲝᲠᲝᲜᲨᲝᲣᲛᲜᲔᲑᲘ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲓᲐᲪᲕᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲐᲡᲔᲕᲔ ᲛᲔᲬᲐᲠᲛᲔᲝᲑᲘᲡ, ᲬᲐᲠᲛᲝᲔᲑᲘᲡ ᲓᲐ ᲠᲔᲖᲘᲓᲔᲜᲢᲣᲠᲘ ᲡᲐᲛᲬᲐᲠᲝᲔᲑᲘᲡ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ ᲕᲝᲠᲝᲜᲨᲝᲣᲛᲜᲔᲑᲘ ᲡᲐᲛᲐᲠᲗᲚᲘᲡ ᲛᲘᲖᲜᲘᲗ, ᲠᲝᲛᲚᲘᲡᲐᲗᲕᲘᲡ ᲐᲠᲘᲡ ᲒᲐᲜᲡᲐᲖᲦᲕᲠᲣᲚ

զ) հարբեցողության դեմ պայքարի մասին.

ե) բարեկարգության մասին.

ը) ցանքսերը, մարգագետիններն և առհասարակ բուսականությունը վիճանալուց կամ արածավերից պաշտպանելու մասին.

թ) անցնող զորքերը բնակարաններում տեղավորելու մասին:

4. Եթե անհրաժեշտ է հրատարակել պարտադիր վորոշում այնպիսի հարցերի վերաբերյալ, վորը չի նշած 3-րդ հոդվածում, գյուղական խորհուրդը պետք է այսպիսի վորոշում հրատարակելու համար խնդրի համար պատասխան ռայոնական գործադիր կոմիտեներին կամ քաղաքային խորհուրդներին:

5. Պարտադիր վորոշումը կարելի յե հրատարակել մի տարից վոչ ավելի ժամանակով նրա գործադրության դնելու որից հաշված:

Ներգործության ժամանակը անցնելուց հետո պարտադիր վորոշումը կորցնում է իր ույժը, յեթե նորից չհաստատի և չհրատարակի այն մարմինը, վորը հրատարակել է այդ վորոշումը:

6. Պարտադիր վորոշումը պետք է ընդունված լինի գյուղական խորհրդի (կամ նրա նախագահության) նիստին և ստորագրված լինի գյուղական խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

7. Պարտադիր վորոշման մեջ պետք է նշած լինի՝

ա) նրա «պարտադիր վորոշում» անվանումը.

բ) նրան հրատարակող գյուղական խորհրդի անունը.

գ) հրատարակության ժամանակը—տարին, ամիսը և որաթիվը.

դ) այն տերիտորիան, վոր վրա տարածվում է նրա ներգործությունը, ընդ սմին նա կարող է տարածվել թե տվյալ գյուղական խորհրդին յենթակա ամբողջ տերիտորիայի վրա, թե նրա մի վորոշ մասի վրա, վորը պետք է ճիշտ նշված լինի վորոշման մեջ.

յե) այն անձանց, հիմնարկությունների, ձեռնարկությունների շրջանները, վորոնց վրա տարածվում է վորոշումը, ընդ սմին նա կարող է տարածվել թե տվյալ տերիտորիայի ամբողջ բնակչության, նրա վրա գտնվող հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների վրա, թե վորոշ խմբերի վրա.

զ) վորոշումով սահմանվող պարտավորությունները.

ե) պատասխանատվությունը վորոշած պարտավորությունների խախտման համար, վարչական կարգով, թե քրեական կարգով (հոդ. 10), հիշատակելով այն պատժի տեսակն և չափը, վորը կարելի յե նշանակել խախտողին.

ը) վորոշման ներգործության ժամկետը (հոդ. 5) և այն ժամկետը, վորի հետո նա ուժի մեջ է մտնում (հոդ. 8):

8. Պարտադիր վորոշումը պետք է հրատարակվի ի հանուր գիտություն հայտարարելով ընտրողների ժողովներում և փակցնելով տեսանելի

տեղերում՝ գյուղխորհուրդների, խրճիթ-ընթերցարանների, գյուղացիական ինքնուգնության ընկերությունների կոմիտեների շենքերի վրա և այլն և ուժի մեջ է մտնում հրապարակելուց հետո տասն որվա ընթացքում, յեթե պարտադիր վորոշման մեջ չի ցույց տրված ավելի ուշ ժամկետ:

Անհետաձգելի դեպքերում, այն է՝ տարրերային դժբաղդությունների, համաճարակի, պաճարախտի և անցնող զորքերին բնակարաններում տեղավորելու դեպքերում կարելի յե կրճատել վերոհիշյալ ժամկետը, նաև պարտադիր վորոշումը կիրակության դնել հրապարակման որից, սակայն պարտադիր վորոշումը չի կարելի կիրարկության դնել նախ քան նրա հրատարակելը:

Ստորագրելուց հետո յերեք որվա ընթացքում պարտադիր վորոշման պատճենը պետք է ուղարկվի ի գիտություն վերադաս ռայոնական գործադիր կոմիտեին կամ քաղաքային խորհրդին, ըստ պատկանելության և ռայոնական դատախազին:

II. ՊԱՏԻԺՆԵՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

10. Պարտադիր վորոշումը խախտելու համար պատասխանատվությունը սահմանվում է որենքով (դատական կամ վարչական կարգով) և ը) նույն պարտադիր վորոշումով (վարչական կարգով):

Ծանոթություն.—Հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների պաշտոնյաները պարտադիր վորոշումները խախտելու համար պատասխանատվություն են կրում մասնավոր անձանց հավասար:

11. Գյուղական խորհուրդների պարտադիր վորոշումներով այս վորոշումների խախտման համար սահմանվում են հետևյալ վարչական պատիժները՝

ա) տասը ռուբլուց վոչ ավելի տուգանք և

բ) հարկադիր աշխատանք հինգ որից վոչ ավելի ժամանակով:

12. Այն դեպքում, յերբ նպատակահարմար չէ տուգանքի կամ հարկադիր աշխատանքի կիրառումը, խախտման չնչին լինելու կամ վորոշման մասին խախտողի տեղյակ չլինելու և նման պատճառներով, պարտադիր վորոշման խախտողին կարելի յե հայտնել նախազգուշացում:

III. ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

13. Պարտադիր վորոշումը խախտելու դեպքում արձանագրությունը տալիս են ա) գյուղական խորհրդի անդամը. բ) միլիցիայի աշխատակիցը, գ) գյուղական կատարածուն և դ) այլ պաշտոնյաները, վորոնց այդ իրավունքը տրված է հատուկ որենքներով:

14. Մեղադրվողին իրավունք է վերապահվում արձանագրության մեջ մտցնել իր բացատրությունը։

Կազմած արձանագրությունը պետք է ներկայացնվի մեղադրվողին և ստորագրվի վկաների և արձանագրություն կազմողի կողմից։

Այն դեպքում, երբ մեղադրվողը հրաժարվում է արձանագրությունը ստորագրելուց այդ մասին հիշատակվում է արձանագրության մեջ նշելով հրաժարման շարժառիթը։

Մեղադրվողի հրաժարվելը արձանագրությունը ստորագրելուց չի կասեցնում նրա հետագա ընթացքը։

15. Կազմած արձանագրությունն անհապաղ ուղարկվում է գյուղական խորհրդին։

16. Արձանագրությունը ստանալուց հետո գյուղական խորհուրդը վճիռ է հանում գործի կարճման մասին, եթե մեղադրվողի արարքը չենթակա չի հետապնդման, կամ մեղադրողին վարչական պատիժ նշանակելու կամ գործը դատարանին ուղարկելու մասին, եթե պարտադիր վորոշման խախտման համար պատասխանատվություն է սահմանված դատական կարգով (հոդ. 10) կամ եթե պարտադիր վորոշման խախտմանը միացել է այնպիսի արարք, վորը հետապնդվում է դատական կարգով։

17. Այն դեպքում, երբ պարտադիր վորոշումը խախտելու մասին գործը դատարանը ընդունել է քննության համար, խախտողը չի կարող նույն արարքի համար պատժվել վարչական կարգով բացի այն դեպքից, երբ դատարանն ուղարկում է գործը քննելու վարչական կարգով։

18. Այնպիսի խախտումների մասին գործերը, վոր կատարել են ԽՍՄիության, ԱՍՍՀՄ, ՎՍԽՀ և այլ հանրապետությունների և ինքնավար մարզերի կենտրոնական գործադիր կոմիտեների անդամները, ժողովրդական կոմիսարների խորհուրդների անդամները, հանրապետությունների և ինքնավար մարզերի դատախազները, ռայոնական գործադիր կոմիտեների, քաղաքային խորհուրդների և գյուղական խորհուրդների անդամները, դատավորները, դատախազները և քննիչները, նաև ռազմական պետությունների դիպլոմատիական և հյուպատոսական ներկայացուցիչները, կամ թե փոքրահասակները և մինչև 16 տարեկան հասակ չառած անչափահասները, ներկայացվում են ռայոնական գործադիր կոմիտեի և քաղաքային խորհուրդների նախագահություններին, ըստ պատկանելության, հետագա ուղղություն տալու համար։

19. Գյուղական խորհրդի պարտադիր վորոշումը խախտելու համար վարչական պատիժ նշանակելու մասին վորոշում կարելի է կայացնել խախտման որվանից մի ամսվա ընթացքում։ Այս ժամկետն անցնելուց հետո, գործը պետք է կարճվի։

Այն դեպքում, երբ գործը սկզբումը գտնվում էր դատական կամ քննչական մարմինների վարույթում, մատնանշած ժամկետը հաշվվում է գործը վարչական մարմիններին ուղարկելու որից։

ՄԵՍ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ս. ԿԻՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

20. Վարչական պատիժը չի կարելի նշանակել այնպիսի արարքի համար, վորը թեև խախտում է հանդիսանում կատարելու պահին, բայց վորոշում կայացնելու պահին խախտում չի կարելի համարել պարտադիր վորոշման փոփոխության, վերացման և ներգործության ժամկետն անցնելու պատճառով։

21. Վարչական պատժի մասին վճիռ կայացնելու ժամանակ գյուղական խորհուրդը պետք է հաշվի առնի կատարած խախտման բնույթը, մեղադրվողի հասակը, սոցիալական վիճակը և նյութական կարողությունը։

22. Վարչական պատիժ նշանակելու մասին վորոշումը պետք է շարադրվի գրավոր ձևով և ստորագրվի գյուղական խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից։ Վորոշման պատճենը պետք է հանձնվի պատժի յենթարկված անձին, հայտարարելով նրան գանգատարկման և վերաքննության մասին խնդիրք տալու կարգն և ժամկետը։

23. Նույն կարգով գյուղական խորհուրդները վարչական պատիժ են նշանակում ռայոնական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների պարտադիր վորոշումները խախտելու համար այն դեպքերում, երբ պարտադիր վորոշումները խախտելու համար պատիժ նշանակելու իրավունքը վերապահված է իրենց նույն պարտադիր վորոշումներով։

Այս դեպքում գյուղական խորհուրդները իրավունք ունեն պատիժ նշանակելու սույն կանոնադրության 11-րդ հոդվածում նշած սահմանների սահմանում, եթե ռայոնական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների պարտադիր վորոշումներում չեն սահմանված ավելի փոքր պատիժ։

Այն դեպքում, երբ գյուղական խորհուրդը անհրաժեշտ է համարում նշանակել պատիժ ավելի մեծ չափով, քան այդ վերապահված է իրեն, պատիժ չնշանակելով գործը ներկայացնում է ռայոնական գործադիր կոմիտեին, քաղաքային կամ քաղաքային ռայոնական խորհրդին կից գտնվող վարչական պատիժներ նշանակող համապատասխան հանձնաժողովին (վարչական պատիժների կանոնադրություն հոդ. 4 — ՎՍԽՀ Ո. Ժ. № 24, հոդ. 286)։

[1932 թ. հոկտեմբերի 28-ին (Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 238)]։

IV. ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԳԱՆԳԱՏԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

24. Վարչական պատիժ նշանակելու մասին վորոշման պատճենը հանձնելուց հետո հինգ որվա ընթացքում պատժի յենթարկված անձը կարող է այս վորոշման դեմ գանգատ ներկայացնել համապատասխան ռայոնական գործադիր կոմիտեի կամ քաղաքային խորհրդի նախագահությանը, ըստ պատկանելության։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ, № 24, հոդ. 238)]։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

25. Գանգատը կարելի է տալ, թե գյուղական խորհրդի միջոցով, թե անմիջապես ռայոնական գործադիր կոմիտեյի կամ քաղաքային խորհրդի նախագահությանը։

Այն դեպքում, երբ գանգատը տրվում է գյուղական խորհրդի միջոցով, այս վերջինը պարտավոր է յերեք որվա ընթացքում ներկայացնել գանգատը ըստ պատկանելույն գործի հետ միասին կամ վերաքննել պատիժ նշանակելու մասին իր վորոշումը, յեթե գանգատ տալու հետևանքով յերևան են գալիս նոր հանգամանքներ։ Առաջին դեպքում գյուղական խորհուրդը կարող է կցել իր բացատրությունները։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 238)։]

26. Դատախազական հսկողության մարմինները իրավունք ունեն բողոքարկել վարչական պատիժներ նշանակելու գործը կարճելու մասին վորոշումները։

27. Սահմանած ժամկետին (հոդ. 24) պատիժ նշանակելու մասին վորոշման դեմ գանգատ տալը կամ դատախազի բողոքը կասեցնում է պատիժ նշանակելու մասին վորոշման ի կատար ածումը։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 238)]։

28. Վարչական պատիժ նշանակելու մասին վորոշումը վերաքննելիս, վարչական պատիժը կարելի է փոխարինել նրա այլ տեսակով, սակայն ավելացնելով պատժի ծանրությունը, հետաձգել կատարումը կամ բոլորովին վերացնել, իսկ դրամական պատիժները մասնատել։

Վորոշման պատճենը տրվում է մեղադրվողին, իսկ յեթե վորոշումը կայացել է դատախազական հսկողության անձի բողոքի հետևանքով, պատճենը ուղարկվում է և այս վերջինին։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 238)]։

29. Նախահայտ անկանոն պատիժ նշանակելու համար պատիժ նշանակողը յենթարկվում է քրեական պատասխանատվության քրեական որենսդրքի 114 հոդ. հիման վրա։

30. Գանգատի կամ բողոքի հետևանքով ռայոնական գործադիր կոմիտեյի կամ քաղաքային խորհրդի նախագահության կողմից կայացրած վորոշումը վերջնական է և յենթակա չէ հետագա բողոքարկման։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 238)]։

V. ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ ՆՇԱՆԱԿԵՅՈՒ ՄԱՍԻՆ ՎՈՐՈՇՈՒՄՈՒՆԵՐԻ Ի ԿԱՏԱՐ ԱԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

31. Վարչական պատիժները նշանակելու մասին վորոշումը գյուղական խորհուրդներն ի կատար են ածում միլիցիայի կամ գյուղական կատարածուի միջոցով։

32. Վարչական պատիժ նշանակելու մասին վորոշումն ի կատար ածելուն պետք է ձեռնամուխ լինել կոչ ուշ քան յերկու ամսվա ընթացքում, հաշվելով վորոշման ուժի մեջ մտնելու որից։ Այն վորոշումը, վորի ի կատար ածման համար ձեռնամուխ չեն յեղել վերոհիշյալ ժամկետի ընթացքում, կորցնում է իր ուժը։

Ծանոթություն.—Պատիժ նշանակելու մասին վորոշումը համարվում է ուժի մեջ մտած գանգատարկման համար սահմանած ժամկետն անցնելուց հետո (24 հոդ.), յեթե գանգատ կամ բողոք չեն տրված։

Ռայոնական գործադիր կոմիտեյի կամ քաղաքային խորհրդի նախագահության կողմից բողոքի կամ գանգատի հիման վրա (հոդ. 30) կայացրած վորոշումը ուժ է ստանում վորոշում կայացնելու պահին։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1832 թ. № 24, հոդ. 238)]։

33. Այն դեպքում, երբ վարչական պատիժ է նշանակվում տուգանքի ձևով, խախտողը պետք է տուգանքի գումարը ներկայացնի, ստանալով համապատասխան ընկալագիր, գյուղական խորհրդին կամ պետական բանկի տեղական գործակալությանը տասն որվա ընթացքում հաշվելով այն որից, երբ հայտարարված է պատիժ նշանակելու մասին վորոշումը։

Բանվորի կամ ծառայողի վրա վարչական կարգով դրած տուգանքի հարկադիր գանձումը չի կարելի դարձնել աշխատավարձի վրա, վոր հասնում է վարձողից։

34. Հարկադիր աշխատանքների ձևով պատժի յենթարկվածին գյուղական խորհուրդը ուղարկում է հասարակական նշանակություն ունեցող ձրի աշխատանքների համար (կամուրջների, հիվանդանոցների, դպրոցների, ճանապարհների նորոգման և այլն)։

35. Այն դեպքում, երբ հարկադիր աշխատանքների ձևով պատիժ է նշանակվում բանվորա-գյուղացիական կարմիր բանակի շարքերում գտնվող զինվորական ծառայողներին, վորոշումը ներկայացնվում է ռայոնական գործադիր կոմիտեյին կամ քաղաքային խորհրդին, ըստ պատկանելույն, ուղարկելու համար համապատասխան զորական հրամանատարությանը։

36. Գյուղական խորհուրդը վարչական պատժի մասին վորոշումը ի կատար ածելու ժամանակ, կարող է փոխարինել պատժի մի տեսակը մյու-

39.773

սով, սակայն առանց ավելացնելու պատժի ծանրությունը, հետաձգել կատարումը, պակասեցնել չափը, կամ բոլորովին վերացնել նաև մասնատ դրամական վճարները։

37. Վարչական պատիժը ի կատար չի ածվում, իսկ սկսածը ի կատա ածումը կարճվում է, յեթե այն արարքը, վորի համար պատիժ է նշանա ված, թեև խախտում եր հանդիսանում կատարման պահին, բայց հետա գայում խախտում չի համարվում պարտադիր վորոշման փոփոխության, վ ըացման, կամ նրա նե բգործության ժամանակը անցնելու պատճառով։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՀՍԽՀ-Арм ССР им. А. Мясникяна

352
4-21

ՊԱԼԻԳՐԱՖՏՐԵՍՏԻ I-ԻՆ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ 205. Պատվեր 356. Տիրաժ 200.

ՀՀ Ազգային գրադարան